

ԱՐՕՏ

ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Թիւ 7.

ԱՄՍԱԳԻՐ

ՅՈՒԼԻՍ 31
1876.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՆԴԷՍ

ՏՕՆԱԹՄԲՈՒԹԵԱՆ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. Տ. ԵՍԱՅԻ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀՕՐ

Ամսոյս 15ին Եսայեան մարգարէին Տօնին օրը Աժեն. Տ. Տ. Եսայեան Ս. Պատրիարք Հօր անուան տարեդարձն ըլլալով՝ եկեղեցական և ուրախական շքեղ հանդիսիւ կատարուեցաւ։

Ս. Յակոբայ Տաճարին մէջ հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուելէն ղինի շարականօք և երգասացութեամբ Ժառանգաւորաց՝ Ս. Պատրիարքը բոլոր Միաբանութեան եւ քաղաքացի պատուաւոր անձանց խուռն բազմութեամբ 'ի Պատրիարքարան ելաւ. ուր 'ի շնորհաւորութիւն և 'ի շնորհակալութիւն Ճառեր և ոտանաւոր Ուղերձ մի կարգացուեցան և երգեր երգուեցան 'ի դիմաց Ս. Աթոռոյս Ժառան. Աշակերտաց և Դպրաց։

Ոտանաւոր ուղերձն ձայնիւ եւս երգուեցաւ, զոր ձայնագրածէր Ժառ. Վարժարանի երաժշտութեան Ուսուցիչն Պ. Գէորգ Գրիգորեան և Սուրբ Աթոռոյս Տպարանին մէջ տպագրելով առաջին անգամ իբրեւ նախախոյզի ձայնագրական տպագրութեան՝ նուիրեցաւ սոյն հանդիսին առթիւ Նորին Աժենապատիւ Սրբազնութեան։

Առաւօտեան հանդէսն վերջացաւ Ս. Պատրիարք Հօր յորդորական եւ

digitised by A.R.A.R.@

փոխադարձ շնորհաւորական խօսքով, որով իւր ուրախութիւնը յայտնեց Միաբանութեան զգացմանց մասին յաւելով միայնգամայն թէ՝ ներկայ հանդէսը ոչ միայն ինձ՝ այլ բոլոր Միաբանութեան կը վերաբերի. ուստի եւ շնորհաւորեց փոխադարձաբար։ Գոհանակութիւն և շնորհակալութիւն յայտնեց համայն աշխատաւորաց եւ մասնաւորապէս անոնց, որոց ջանիւքն Տպարանը յառաջադիմութեան նոր քայլ եւս առաջէր ձայնագրութեան մասին և ապա օրհնեց ամենքը հայրական օրհնութեամբ։

Երեկոյեան չափաւոր հացկերոյթ մի պատրաստուած էր Միաբանութեան սեղանատունը, ուր հրաւիրուած էին քաղաքացի երեւելի աղդայիններն։ Ուրախութեամբ և երգերով ճաշելէն զկնի, Ամեն. Ս. Պատրիարքը յատուկ մաղթանքներ կարդաց վասն հաստատութեան Էջմիածնի Մայր-Աթոռոյ և վասն կենաց Վեհափառ Կաթողիկոսին. վասն հաստատութեան Կոստանդնուպօլսոյ Պատրիարքական Աթոռոյ և կենաց Նորին Ամեն. Գահակալին և համայն Ազգ. բարոյական հաստատութեանց յառաջադիմութեան, յարատեւ պայծառութեան եւ բոլոր Ազգին կենաց։ Այն Մաղթանքներն կնքեցան համայն հրաւիրելոց և սեղանակցաց միաձայն Կեցցէ-ներով և Եղէյներով։

Արժան կը համարիմք ձայնագրեալ Ուղերձն ընթերցող Ազգայնոց հաղորդել։

ՈՒՂԵՐՁ

ԱՌ Տ. ԵՍԱՅԻ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՅԱՒՈՒՐ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ ԱՆՈՒԱՆ ԻՒՐՈՅ

Որ 'նդ այդս այդուն զմութն ընդ լուսոյն քողաձիգ՝
Ի կայս ու 'ի կոյս ծագայ երկրի Թափառիք.
Ո՛ փառաղունք անձնագեղից Եդեմին,
Տուք զանկն 'ի վեր Յոսան հրաշ'ց Անմահին.
Հնչէ՛ Սաղմ յերգոց մրմունջ սիրատարփ,
Հրճուին բարձունք յարփւոյն ցոլից 'ի տարափ։

Մանկունք սիրասուն
Գգուեալքդ 'ի գարուն
Ոյց ոգիքդ 'ի խենդ
Կայտուեն թիւնդ 'ի թիւնդ
Օ՜ն տուք Վեհիս 'ի նբուէր
Զմաղթանս սրտից աղօթիկեր,
ԵՍԱՅԻԱՍ մեր Հայր
Կեցցէ յամն յամայր։

digitised by A.R.A.R.@